«ԳԱՌՆԻ-ԼԵՌ»
ԳԱՄ ԲԲԸ
2401, ՀՀ, ք.Եղվարդ, Երևանյան խճուղի 40;
Հեռ. +374 (224) 2 19 54, +374 (10) 34 07 11; ֆաքս +374(10) 340-711:
ՀՎՀՀ 01229936, Հ/հ 163028230361 ՀԷԲ Շահումյան մ/ճ

«GARNI-LER» OPEN JSC
SCIENTIFIC INDUSTRIAL UNION
Republic of Armenia 2401, Yeghvard, Yerevanyan highway 40,
Tel. +374 (224) 2 19 54
Tel. +374 (10) 34 07 11; fax +374 (10) 34 07 11

«19» 11 2024թ.
№ 209

«ԳՈՌ-ՄԱՆ» ՍՊ ընկերությանը
ՀՎՀՀ 08430516
ք. Գավառ, Գ. Միքայելյան 69
Հեռ.՝ 095634333

«Գառնի-Լեռ» ԳԱՄ ԲԲԸ և «ԳՈՌ-ՄԱՆ» ՍՊԸ միջև 14.05.2024թ. կնքված № ԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-13/24-01/044 «ՓԱՅՏԵ ԴԵՏԱԼՆԵՐ»-Ի մատակարարման պայմանագրի (այսուհետ Պայմանագիր) համաձայն «ԳՈՌ-ՄԱՆ» ՍՊԸ-ն պարտավորվել է փուլային մատակարարման եղանակով «Գառնի-Լեռ» ԳԱՄ ԲԲԸ-ին մատակարարել Պայմանագրի մատակարարման ժամանակացույցով սահմանված քանակներով ապրանքները, սակայն սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների ընթացքում մատակարարում չի կատարվել: Արդյունքում 19.11.2024թ. դրությամբ «ԳՈՌ-ՄԱՆ» ՍՊԸ-ն չի մատակարարել 60 (վաթսուն) հատ բռնակի վերադիր և 1 (մեկ) հատ խզակոթ, ինչպես նաև նոյեմբեր ամսվա ընթացքում պետք է մատակարարվի ևս 50 (հիսուն) բռնակի վերադիր և 5 (հինգ) խզակոթ, սակայն մինչ օրս որևէ ապրանք չի մատակարարվել:

Սահմանված ժամկետներում չմատակարարված ապրանքները մատակարարելու և բացթողումը լրացնելու նպատակով 06.11.2024թ. «Գառնի-Լեռ» ԳԱՄ ԲԲԸ գնումների բաժնի պետը «ԳՈՌ-ՄԱՆ» ՍՊԸ-ի gor-man1999@mail.ru էլեկտրոնային փոստին գրություն է ուղարկել, առաջարկով հնգօրյա ժամկետում լրացնել բացթողումը, մատակարաել պայմանագրով սահմանված սակայն դեռևս չմատակարարված ապրանքները, հակառակ դեպքում «Գառնի-Լեռ» ԳԱՄ ԲԲԸ ստիպված է Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն լուծել Պայմանագրը և կիրառել Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա-ենթակետով սահմանված պահանջները, սակայն որևէ ապրանքի մատակարում չի կատարվել և բացթողումը չի վերացվել, որը «Գառնի-Լեռ» ԳԱՄ ԲԲԸ առաջացրել է էական դժվարություններ ՀՀ Պաշտպանության նախարարության հետ կնքած պայմանագրի (Պայմանագիրը գաղտնի) կատարման համար:

Պայմանագրի 2.1.7 կետի հիմքով «Գառնի-Լեռ» ԳԱՄ ԲԲԸ լուծում է «ԳՈՌ-ՄԱՆ» ՍՊԸ 14.05.2024թ. կնքված № ԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-13/24-01/044 «ՓԱՅՏԵ ԴԵՏԱԼՆԵՐ»-Ի մատակարարման պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա-ենթակետով սահմանված պահանջներով՝ «Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526–Ն որոշման 17-րդ կետի համաձայն՝ կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով որևէ չափաբաժնի մասով լուծվում է, ապա որակավորման և պայմանագրի ապահովումները վճարվում են միայն այդ չափաբաժնի նկատմամբ հաշվարկված գումարի չափով:

ՏՆՕՐԵՆ Տ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Կատարող՝
ԳԲ պետ Ա. Ղազարյան
Հեռ. 093-56-60-66